Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 28.12.2023 թվականի «2024 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 334-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսային մասի փոփոխությունը պայմանավորված է հետևյալ խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Համայնքում առաջացած առաջնահերթ խնդիրներին լուծում տալու համար անհրաժեշտ է ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ դասակարգմամբ նախատեսված ընթացիկ նորոգման ծախսերն ավելացնել 15 000,0 հազար դրամով:

«Մասիսի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հիմնադրամ»-ի աշխատանքը մեկնարկելու՝ աշխատողներ ներգրավելու, հաշվապահական ծառայություն և գրասենյակային պարագաներ ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ է տրամադրել դրամական աջակցություն 2 260,0 հազար դրամի չափով:

Համայնքի վարչական տարածքում առուների մաքրման, ճանապարհների հարթեցման և տարածքների բարեկարգման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսված միջոցներն ավելացնել 5 000,0 հազար դրամով:

Համայնքի բոլոր բնակավայրերում արտաքին լուսավորության ցանցի ընդլայնմամբ պայմանավորված ավելացել է էլեկտրոէներգիայի ծախսը, ինչպես նաև չի բավարարում ցանցի սպասարկման համար նախատեսված միջոցները: Վերոնշյալով պայմանավորված անհրաժեշտ է բյուջեում համապատասխանաբար ավելացնել 27 000,0 հազար դրամ և 8 000,0 հազար դրամ:

Պարբերաբար համայնքի տարբեր բնակավայրերից համայնքապետարան են դիմում մարզիկներ, որոնք ունենում են ֆինանսական աջակցության կարիք՝ մրցաշարերի մասնակցելու համար: Մարզիկներին աջակցելու նպատակով անհրաժեշտ է բյուջեում նախատեսել լրացուցիչ 1 500,0 հազար դրամ:

Մասիս համայնքում սուբվենցիոն ծրագրով իրականացվող գազաֆիկացման աշխատանքների ծավալաթերթում փոփոխություններ են կատարվել, որով պայմանավորված լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտություն է առաջացել: Հաշվի առնելով վերոգրյալը համապատասխան աշխատանքների համար նախատեսված միջոցներն անհրաժեշտ է ավելացնել 11 445,3 հազար դրամով:

2025 թվականի համար նախնական հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է ձեռք բերել ընդհանուր 1 868,0 հազար դրամի հետևյալ նախագծանախահաշվային աշխատանքները"

- Արևաբույր բնակավայրի Մ. Խորենացի, Վ. Մամիկոնյան և Ս. Թեհլերյան փողոցների ասֆալտապատման աշխատանքներ
- Մասիս համայնքում փողոցների ասֆալտապատման աշխատանքներ

Սուբվենցիոն ծրագրով համայնքում իրականացվող Մասիս քաղաքի Նոր թաղամաս թիվ 1 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների ծավալաթերթ նախահաշիվը հաստատվել են նոր խմբագրությամբ, ուստի անհրաժեշտ է տարբերության չափով՝ 6 775,9 հազար դրամ գումար նախատեսել բյուջեում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների							
Հազար դրամ							
h/h	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Վարչական մասի Ծախսեր*	*ֆոնդային մասի Ծախսեր*
				Ծախսեր			
1	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	4251	15000,0	
2				Նվիրատվություն հասարակական կազմակերպություններին. Մասիսի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հիմնադրամ	4819	2260,0	
3				Վարչական սարքավորումներ	5122		-39189,2
4	**04**	**3**	**2**	**Նավթամթերք և բնական գազ.** Մասիս համայնքում գազաֆիկացման աշխատանքներ	5112		11445,3
5	**04**	**5**	**1**	**Ճանապարհային տրանսպորտ.** Մասիս համայնքում ճանապարհների ասֆալտապատման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		1818,0
6				փորձաքննություն	5134		50,0
7	**05**	**1**	**1**	**Աղբահանում.** Չնախատեսված վայրերից աղբի հեռացում	4213	5000,0	
8	**06**	**1**	**1**	**Բնակարանային շինարարություն.** Մասիս համայնքում բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	5113		6775,9
9	**06**	**4**	**1**	**Փողոցների լուսավորում.** Փողոցների լուսավորության էլ էներգիա	4212	27000,0	
10				Փողոցների լուսավորության ցանցի սպասարկում	4251	8000,0	
11	**08**	**1**	**1**	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Սպորտային	4727	1500,0	

				նպաստներ			
12				Մասիս համայնքի Ղուկասավան բնակավայրի կենտրոնական այգու հիմնանորոգման աշխատանքներ	5113		19100,0
13	**11**	**1**	**2**	**Պահուստային ֆոնդ**	4891	-58760,0	
						0,0	***0,0***
				Ընդամենը			

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ